

19341

891.99

0-64

20 03

89.542-3

0-47



ՄՕԴԱ Է ՔԱՆԿԱՆՈՒՄ



ԵՐԿՐՈՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

891332-3

0-68

242

Կ. ԳԻՕՐԳԻ-ԽԸՆ ՕՍԷՓՈՎ

Մ Օ Դ Ե Է, Գ Ե...



4658.

(Արտատպած «ԱՐԶԱՐԱՆ» լրագրից)

Տ Փ Խ Ի Ս

Արագ. տպար. Մն. Մարտիրոսեանցի եւ Հնկ.
Միքայելեան փող. տուն № 81.

1896

4507

Дозволено ценз. Тифлисъ, 20-го Августа 1896 года.

Մ Օ Ռ Ա Է, Ք Ա... —*—

Ուտա Իսայենց հարս Անանին սովորականից շատ ուշ դարձեցաւ։ Արթնանալուն պէս մի խորը յոգւոց հանեց և աչքերն առաստաղին բևեռեց։ Նախընթաց գիշերուայ տեսարանները շարիշար անցան նրա մտքով.—նա նստած էր իւր սրբտակից Սերգոյի կողքին, երբ սա մի մեծ բնկերութեան մէջ «տիվ-տիվ» ասած թրդթախտիկէն էր բաժանուում։ Ո՛հ, սրբան համարձակ ու տապնապալից առաջ էր տանում իւր խաղը, սրբան գրգռվում ու տաքանում էր նա, տարուելով խոշոր գումարներ։ Ինքը՝ նստած նրա կողքին, ամեն կերպ աշխատում էր զսպել նրան՝ ծունկը նրա ծնկի վրայ էր դնում, ոտը ոտին խփում, կամ կռնից քաշում ու կրմշտում, բայց զուր էր նրա ջանքը։ Նա

աւելի էր տաքանում ու տաքանալուց էլ տարվում:—Ո՛հ, մեռնիմ քու օսկէ բի-
խիրիդ, Սերգօ ջան, վուր էգբան դօշադ
ու սրտալի տղայ իս... Ամէն բանի մէջ
սրտալի իս, Անանին չէն գենացվալօս,
Սերգօ ջան: Էդ սրտալիութիւնն է, վուր
ինձ էրից ու դազից: Ինչ վուր ծուցումը—
վենացվալէ նրա ծուցին—փուղ ունէր,
դիւփ տուից, մէ իրիք թուման էլ Քալ-բի-
ճօ Կէկոյին պարտ մ'նաց: Գանա իս չէի
կանա էդ իրիք թումանը հանէի ջիբիցս
ու տուիլ էի, վուր իրան սիւմցնէր, ամա
չէ, ասի՛ մաւա կէհան նրան, թէ՛ չէ: Օ՛հ,
թէ մէ ծուռ աչքով էր մտիկ տուի նրան
Քալ-բիճօ Կէկօն, կաւքնիրը վէր կուրե-
րէի: Բաս կու թողնէի, վուր իմ աննման
Սերգոյին բեղամաղ անէր. վենացվալէ
նրա օսկէ բիխիրին:—Էն աննամոտսնիրը
կի քնթի տակ էին ծիծաղում, բանի նա
էնէնց տաքանում էր: Ի՛հ, կրիմ նրանց
գլուխը, թող իրանց սիրեկնիւրին մասխա-
րա գցին: Էլամ էն ծիպլիան Սօնէն.
մուռն կենայ, թէ չէ, ամեն բան աշկարա
կօնիմ, ինձ Անանի կօսին: Էն օրը չէր,
վուր Սարի-էծի կնիկ Սօնէն նրա համա
ինչիւր էր ասում. Թափօն էլ հաստատից:

Ինչ—վուր նրա ու Առաքելի կնիկ Էվայի
համա ին խօսում, հայիփ չէ իմ Սերգօն.
վենացվալէ նրա օսկէ բիխիրին. նրա թա-
յին կուլի հա, նրանց գլխի տրաքուիլը:
Ո՛վ չունէ սիրեկան. մօղա է. դուք էլ պա-
հեցէք թէ շնուրը ունիք: Ամա Սերգոյիս
թային, վենացվալէ նրա աչք ու ունիւրն,
վուր տրաքուին՝ չին կանայ ճարի: Կու-
ղիան Գրիգօլի տղէն է, կօսէ. ի՛հ, կրիմ
ձիր գլուխը: Մամէն վուր կուղիան ըլի,
տղէն ի՛նչ անէ: Դիւփ ջգրու է, ճիճիւնի
ին գալի, վուր էտէնց սիրուն տղայ ինձ
ռաստ էկաւ. բաս կի չէ ձիր սիրեկնիւրի
նմանը կուլի. մեռնիմ նրա բլբուլ լիզուին:
Հարեան սենեակում ժամացոյցը տասն
անգամ խփեց: Անանին շտապեց անկողնից
վեր կենալ, մտմտալով «հօրէսա Եագօրը
տանից դուս կէհայ. առանց ինձ չգնայ,
նրամէն փուղ առնիմ, Սերգոյին տամ, ծու-
ցումը փուղ ունենայ, վուր խաղալիս ջի-
բը լիքն ըլի ու էրէգուայ պէս ամուլթով
չմ'նայ»:

Դահլիճը կահաւորած է ամենա-
նուրբ ճաշակով. ամենուրեք երևում է ճո-
խութիւն ու հարստութիւն: Սենեակը

համարեա պարտէզ է դարձրած՝ այնքան բազմաթիւ են թանկագին ու հազուագիւտ էրզոտիկ բոյսեր: Մի գողտրիկ գահաւորակ անկիւնի մօտ ներկայացնում է արհեստական հովանոյ՝ այնքան ճոխացած ու փարթամացած են նրա շուրջը ցիկուսներ, ամարասներ, մագնօլիաներ և տեսակ-տեսակ արմաւենիներ: Անանին սիրում էր բազմել հէնց այդ գահաւորակի վրայ և ընդունել իւր ծանօթներին ու բարեկամներին: Այժմ էլ նստած է հէնց այդտեղ, խօսակցելով իւր ամուսնու հետ:

— Եագօր ջան, փուլս պակսեցաւ, պէտք է ինձ տաս:

— Ի՞նչ կօնիս, Անանի ջան:

— Հը՛մ... էրէզ փողոց էի գնացի. մէտիդ մէ ձեռք գրանիցի էրէխի շուր տեսայ, խիստ արմաղան, վուր չէլած. մըտքումս դրի միւր Գատոյի էրէխի համա առնիմ, ուրախացիմ...

— Հա՛...

— Հա, զենացվալէ... մեռնիմ նրանց, ինձ վուր տեսնում ին՝ «բարուշիի ջան» բղաւելով առաջս ին վագում. մէ հէստի պաշաշում, հէստի ալէրսի ին անում, վուր ինձ ու ինձ հալվում իմ...

— Աստու՛ձ նրանց բաշխէ. լաւ էրէխէք ին:

— Արա նրանց համա մարդ բան զնամիշ կօնէ:

— Հալբաթ. . . ճիմիսկվէտ դուքնի աշկիրտի ձեռով կու վագեցնիմ. . . ճինգ թումանը հերիք է:

— Բարէ՛մ տասը զրգէ... սով է իմանում, աչք է, կուլի էլի ուրիշ լաւ բան ռաստ գայ:

— Աչքիս վրայ, տասը կուզրզիմ, առաց Եագօրն ու գնաց իւր գործին:

— Վենացվալէ Սերգոյին. տաս թումանը ջիրումը կունենայ, իր համա արխէին կու խաղայ. Քալ-բիճօ Գէկոյի ու Ծիպլիան-Սօնի սվտեմէն գուբայ, առաց Անանին Եագօրի դուրս գնալուց յետոյ:

Անանին դեռ էլի իւր տեղումը նըստած անձնատուր էր եղած քաղցր երազների: Նրա մտածմունքների առարկան դարձեալ իւր աննման Սերգօն էր: Նրան միշտ այն էր զարմացնում, թէ ինչպէս հկշտ կարողացաւ «ճանկել» Սերգոյին և դուրս կորզել այն «ալփառութներից», որոնք ոչինչ ջանք ու աշխատութիւն չէին խնայում գրաւելու նրան իրանց կողմը:

Համարեա պարտէզ է դարձրած՝ այնքան բազմաթիւ են թանկագին ու հազուագիւտ էրզոտիկ բոյսեր:

Ինչ ասես, որ նրա մասին չէին ասում, որպէսզի Անանու սիրտը կոտրեն, նրանից հեռացնեն: Բայց ոչ, Անանին այնպիսի կին չէր, որ այդպէս հեշտ նրան մտքիցը հանել տային: Փող, ամեն տեսակ սազ ու ջազ, ճշմարիտ է, պէտք էր գործ դնել, գործ էլ դրաւ ու նրան իւր կողմը քաշեց: Ուրիշ կերպ անկարելի էր. «հիմի կուայ ջահէլ տղերանց սիրտը միայն փողով կարելի է փափկացնել»:

— Բնա, վերջացրեց Անանին իր մը-տածմունքները, փուլը հիզը սէր է բե-րում. դուրթ է ասում միկիտան Պետրու-սի կնիկը՝ փուլով, կօսէ, վնւր ջէհէլ տը-ղին գուզիս, թամահ կօնիմ: Ի՞նչ ու իմ Աստուծ, դուրթ է ասում: Սա էլ Սերգոյի համա շատ շալիչ էկաւ, ամա վէր մօզար-թովի... Իժում վուր սախտ մ՛նաց, սկսից դէս ու դէն խօսիլ, թէ ուսում չունի, կօսէ, փրիկաչչիկ է, կօսէ. հըմ, ինձ էլ դրանով խափից, չէ: Մէ մարդ նրան հարց-նէ՝ սէրը ուսում ինչ կօնէ, ան նրա սի-րեկանը ինչ մէ ուսումնաւարտ տղայ է, վուր ինձ մասխարա է գցում... Ի՛, խու-ղիմ նրա ջանդարա գլուխը:

— Բն, տանն իս էլի, բացադանչե-լով ներս վազեց դահլիճը Լափշա-Մաշօն:

— Հն, ջէր տանն իմ. էս է ուզում էի դուրս գնա:

— Անանի, մէ բան իմ փիքը արի, մէ բան, վուր իմանաս, բէփդ մէ կու բա-ցուի, վուր էլ ի՛նչ ասիմ...

— Հն, արա մէ ասն տեհնիմ ինչ իս փիքը արի...

— Ուզում իմ պիկնիկ սարքի:

— Ի՛, տհաճութեամբ ասաց Անա-նին, չրթունքները ծռմուխով. Օսանի փէ-շաին իս ուզում բանեցնի՛:

— Օսանի կի չէ, ջն, նուր մօղնի, տղայ ու աղջկայ պիկնիկ:

— Օ՛հ, էդ ինչ լաւ ասիր, ուրախա-ցաւ Անանին. հայ թէ լաւ բան իս փիքը արի... Աբա, արա, վինձլօ գլուխ բերիս... Ամա, ջէր մէ ինձ ասն, թէ ում ու ումն իս ուզում հաւարի:

— Բն, միրոնը կուլին էլի, ասաց Մաշօն Անանուն աչքով անելով:

— Հն... էդ խիստ լաւ կուլի:

— Միւր, դու, նա...

— Հն, նա էլ. վննացվալէ նրա օս-կէ բիսիրին:

— Նա... միր մարդիքը, բու մարդը,
տղիքդ...

— Ի՛նք, ի՛նք, ի՛նք, համա քէփ
կուլի:

— Քէփ կուլի ու էնէնց... վուր
գուն ըիդ համա Սերգայի հետ արխէին
քէփ անիւ: Տղերանցդ համա էլ բարիչնէք
մօդ կօնիմ. ջէհէլնիր ին, թնդ նրանք էլ
խօշ ու քէշ անին, մարդուդ համար էլ...

— Հա, մարդուս համա, ընդհատեց
Անանին, թէ կանաս Ծուռ-ոտնանու կը-
նիկ Նինոյին մեծքէ. Եագօրս նրան խիտ
է հաւնում:

— Նինոյին... հա միր կամպանիու-
մը չի խառնուի:

— Ինչի՞ չի խառնուի, նրա գլխի
տրաքուիլը...

— Մարդը նրան չի թողնի:

— Ի՛հ, խուլիմ նրա անշնուրբ մա-
խարա գլուխը:

— Անշնուրբ մարդումէն ուրիշ ի՛նչ
իս մնում. 2է, Նինոյեմէն ձէռք վի կալ-
Եագօրիդ համա մէ ուրիշը կու ճարիմ:

— 2է, նրա գլխի տրաքուիլը, տա-
քանում էր Անանին, վուր գայ էլ, ի՛նչ
հաջաթ: Էնչախը Եագօրս խիտ միամիտ

նրա հիգնէն կու ննդնի, իս էլ ինձ հա-
մա Սերգայիս հիդ արխէին ուլի բիլի
կօնիմ:

— Ասում իմ, չի ըլի, անշնուրբ
մարդու կնիկ է:

— Գենացվալթ, Ներոէսենց Նինօն
նրամէն քէթար անշնուրբ մարդու կնիկ
չէ, վուր շարաթուայ մէջ շապկի պէս էր-
կու անգամ սիրեկան է փոխում... Ատա-
մանենց Սօնկէն դհա նրամէն անշնուրբ
մարդու կնիկ է, Ժամշինոյենց Լիգէն...
էլ վմը մէկն ասիմ...

— Ասում իմ Ծուռ-ոտնանու կնիկ
Նինոյին չիք կանայ միր կամպանիայում
զգի. մտքեմէդ հանէ...

— Ջհանգամը նրա գլուխը...

— Հա, էտէնց... Եագօրիդ համա
կանչիլ իմ, գուրայ էլ գօրըցի Կատօն
իրա բարիչնայ աղջկերանց հիդ: Կատոյի
հիդ Եագօրը չէ, ու խօշ կօնէ, աղջկերանց
հիդ տղիքդ...

— Հա, տղիս համա էն աղջկիլ լաւ
է... Կատօն կի... չիմ գիգի Եագօրը նը-
րան կու հաւնի:

— Խիդ Անանի, Սերգայի ալէրսի
հիգնէն ընկած, շատ քան, թուրմէ, աչ-

2 (14.13)

քեմէդ փախցրիլ իս: Էն օրը ձիր տանը
չտեսնար բառ թէ Եագօրդ վուհեց էր կլան-
ձի-կլանձի տալիս Կատոյի հիւ:

— Էհ, հոյ է այնուամբ գցում. օղօնդ
կի իմ Սերգօն կոպրիս ըլի. վենացվալէ
նրա օսկէ բիխիրին:

— Էս է պրծաւ, ասաց Մաշօն, տե-
ղից վեր կենալով, մեր կամպանիայի աղ-
ջկերբը իրանց տղամարդկանցով, ով որ
ուզենայ:

— Իրանց զանգուլակներով էլ հա, —
վրայ բերեց Անանին ու ինքն էլ վերկա-
ցաւ տեղից:

— Խօսք կայ... ի հարկէ իրանց զան-
գուլակներով... բարիչները ջէհէլ տվիրանց
համա, թող նրանք էլ իխտիլաթ անին.
մօղա է, քան... .

— Գենացվալէ, Մաշօ ջան, մենակ
Թափլոյի մարդուն չկանչիս, կու հարիի,
գլխներիս մի օյին գուրայ:

— Նրան կիսաբերան կօսիմ... .

— 2է, չէ, էտ էլ չի ուզի, վրայ բե-
րեց Անանին:

— Լաւ, բառ էսէնց... Կրծանիսի բա-
ղումը, մէկ տեղ, հիւռու տեղ, վուր մինը
միդ համա եարա ըլինը: Մարդավուլս՝

տղամարդը իրիք մանէք, աղջիկ ու բա-
րիչնա էրկու մանէթ:

— Քիչ չէ իժում: Տղամարդը թող
հինգ մանէթ ըլի, աղջիկ ու բարիչնայի
հախը թէգուզ իրիք մանէթ... .

— 2է թանգ է. դաբուլ չին կենայ:
Էհ, էդ թողնինք, էդ վիրչուան բան է...
Դուն մէ ինձ ասա, խօս դաբուլ իս:

— Վա... դաբուլ իմ ու էնէնց, երբ
Սերգօս կշտիս կուլի. վենացվալէ նրա օս-
կէ բիխիրին:

— Բառ հիմի գնամ ուրիշներին էլ
ասիմ, նրանցմէն էլ խօսք առնիմ ու թա-
ղարիքս տեսնիմ, ասաց Լափշա-Մաշօն և
աներևոյթացաւ:

գրեցի իմ իմ քան

Օրերից մէկին պիկնիկը զլուս եկաւ,
բայց ոչ թէ Կրծանիսի մի յետ ընկած
այգում, այլ Քօռ-Միրոյի այգում: Թէև
խօսք արած էր Կրծանիսի այգու հա-
մար, բայց այգետէրն իմանալով որ պիկ-
նիկը մի ինչ որ «նուր մօզնի» պէտք է
լինէր, խօսքից յետ կանգնեցաւ հէնց
պիկնիկի նախընթաց օրը: Մեծ ցաւ
պատճառեց այս հանգամանքը Լափշա-

*հարցի
Լափշա-Մաշօն
484/45 օրը 45 աստի Էր Բայր
արտ. Կրծանիսի քանիքը*

Մաշոյին: Նորից մարդիկ ման ածեց
պիկնիկի խալխի մօտ, թէ «Կրծանխուժ
չի լինի, փլան-փլան բաղումը կուլի» և
այս կարգադրութիւնն անելուց յետոյ
հանգստացաւ և մի կուշտ օրհնանք ու-
ղարկելով այգու տիրոջը՝ սիրտը հովացնե-
լու համար ամեն տեղ այս էր ասում՝
«քա՛, միւր նուր մօգնի պիկնիկը նրա
սրտին խիստ է դիպի. էրնէկ գիտենամ
ինքը ինչ պտուղ է... Ռուսէթն ու գրա-
նիցէն օրթաճալի ճամփայ է շինի, միզ
կի քիքս է գալի. . . »:

Նշանակած օրը այնպէս էր կարգա-
դրած որ «կաւալէրները» պէտք է վաղօ-
րօք այգումը գտնուէին մի-մի փունջ
ձեռքներին իրանց «դամաների» պալու
ժամանակ ներկայացնելու: Սերգօն մեծ
աշխատանքի մէջ էր. դէս ու դէն ընկաւ
մի լաւ փունջ ապսպրելու ու «թաւաղա»
անելու իւր աննման Անանուն: Գարբիէլը
խոստացաւ չինել տալ մէ հստի «բուկէտ»,
որ թէ ծաղիկներով և թէ հօտով նմանը
Պարթումն էլ չգտնուի: Vous savez,
monsieur Serge djan, բացատրեց նա,
comme chez nous à Paris даже il
n'y a n'a pas! Աֆերիմ Գաբօ, իւր խօս-

քը կառարեց. փունջը խիստ լաւ էր դու-
գած, ծաղիկներն էլ բոլորն ընտրովի,
հոտն էլ վերտ վիօլէտ, վիօլէտ դը
պարմ, էս բուքէ, մազնօլիա ու սրանց
նման անուշ բուրմունքներով համեմած:
Փունջը բարակ, նկարէն թղթի մէջ
փաթած մնում էր Գաբոյի խանու-
թում, որ Սերգօն գայ տանի: Օրը լի
օր էր. փրիկաշիկ Սերգօն՝ կերպա-
րանքը տխրած, թուրը բերնում ցամա-
քած, հազիւ խօսքը խօսքին կպցնելով
մօտեցաւ «սօղէինին» ու յայտնեց թէ ինչ
որ Վամիդի թէ գէղիգի աղջիկը մեռել է,
նրան թաղելու է գնում ու խնդրեց թոյլ
տալ գնալու: Արի ու մի հաւատար. երե-
խայ խօսմ չէ որ խաբի: Հէնց որ «դաս-
տուր» ստացաւ, իսկոյն վազեց Գաբոյի
մօտ, վերցրեց իւր թանկագին գանձը,
վարձեց «Վանիշկի» ֆայետօնը և «հերիա»
դէպի Քօռ-Միրոյի այգին:

Բոլոր «կաւալէրները» հաւաքուած են
այգում. մի վարձած վէլօսիպէդիստ ու-
ղարկուած էր առաջ և հրամայած նրան
կանգնել «դաղախների» բլնի մօտ ու հէնց
որ ֆայետօն ֆայետօնի ետևից եկած տես-
նէ, շտապով տեղեկացնէ: Բաղմանչի ի-

մերէլին էլ ասած էր՝ կանգնել էդիլիսա-
նովի ֆարրիկի մօտ ու հէնց վէտիպէդը
նկատէ, գայ բաղումը նրանց իմաց տայ-
ժամի մօտ երկուսն էր, բաղմանչի իմե-
րէլը այգու դռան մօտ բղաւեց՝ «էլիսա-
էդը, էլիսաբէզը գալիս է»։ «Կաւալէրնե-
րը» Արգուլ-Բաղիրին առաջ առած եկան
շարուեցան Քէշա-Յօվանու այգու մօտ՝
փունջները ձեռքներին։ Արգուլ-Բաղիրը
որ իւր կեանքումը շատ չար ու բարի էր
տեսած, շատ տեսակ ջրաղացի քար գըլ-
խովը պտրտած ունէր, նա էլ աչքերը
չորս էր արել՝ դիտելով այս նորահայտ,
անսովոր երևոյթը։ Փայէտօնները մօտե-
ցան, սաղանդարի գաստան «չաղիանին»
ածեց։ «Կաւալէրները» վրայ վազեցին ու
իրանց «գամաներին» ֆայէտօններից իջե-
ցրին։ Սերգօն մի առանձին նազով թա-
ւաղա արաւ Անանուն փռւեցը։ Անանուն
խիստ դիւր եկաւ փռւեցը և աչքերի խորքից
ալմաս ու բրիլեանտ թափեց—մի այնպիսի
քնքուշ ու խորհրդաւոր հայեացք ձգեց Սեր-
գոյի վրայ, որ եթէ ուրիշը լինէր, տեղն ու
տեղը կըհալուէր, ջուր կըկըտրուէր. բայց
Սերգօն գիմացաւ այդ հայեացքին և կող-
քը կողքին տուած մտաւ Անանու հետ այգի։

Սուրբէն «էրկէն ու մէկ խէյվանումը»
թիթերի տակ, սաղացրած էր։ «Կաւա-
լէրների» փունջերը բաժակներում յար-
մարացրած դրած էին ամեն մի «գամի»
առջև։ Նստած էին սեղանի շուրջը նոր
մօգնի ամեն «կաւալէր» իւր «գամի» կող-
քին։ Թամաղէն Եաղօրն էր և իւր «գա-
մա» գօրըցի Կատոյի էշխից պեղացած,
խիստ լաւ թամաղուլիւն արաւ ու ամեն-
քին մեծ իխտիլաթ ցոյց տուեց։ Արգուլ-
Բաղիրը այդ օրը խիստ էր կատաղել՝ ինչ
որ վրացերէն երգ զիտէր բերան արած,
վրայ ու վրայ ասում էր ու ասիգնացի-
ղեր էր որ գրպանն էր տանում։

Թամաղէն կենաց կենացի յետեից
խմելով ու կամպանիին խմացնելով՝ կա-
տարը տաքացած յանկարծ գոչեց.

— Էս էլ խմինք էշխի կենացը ու ամեն
«կաւալէր» իր կողքի «գամին» պաշ անէ։
Թամաղի այդ առաջարկութիւնից մեծ
իրարանցում ընկաւ պիկնիկաւորների մէջ։
Անանին ու Սերգօն դեռ մէկ միմեանց
նայեցին, յետոյ աչքները կամպանիի կողմն
ածեցին և վերջը մէկ «հետի լազաթով
պոռօտի արեցին, փուր Արգուլ-Բաղիրը
ջգրու պոռօնիւրը կաբի թկրով սրբից»։

859
4658

Սպասարի Կէշ Կէշ Երգարար

— Ուռռն, ուռռն, էքստրան, թամաղի
կենացը, ձայն տուրն պռօշտու սիրահար-
ները:

Ճաշն այսպէս մեծ իխտիլաթով վեր-
ջացաւ, երբ արդէն մութն էր ընկել: Ճա-
շից յետոյ զոյգ-զոյգ ցրուեցան այգու
«խէյվաններում ման դալու»: Անանին ու
Սերգօն ջրի ափին նստած Քռի ալիքնե-
րին էին նայում, թէ ինչպէս նրանք խո-
խոջալով էին միմեանց հետեից վաղ տա-
լիս և իրանք էլ նրանց խոխոջին արձա-
գանք տալիս: Նրանք պատրաստ էին յաւի-
տենապէս այդ խոխոջին մատաղ լինել, եթէ
անպիտան Արդու - Բաղիրը իւր գիւ
ձայնով չհրդէր «Սաղմարէլօ շվիգօրիթ»,
որ նշան էր թէ տուն գնալու ժամանակ է:

Արդէն բաւական ուշ էր որ կամպա-
նիէն Արդու Բաղիրի դաստէն առաջն ա-
րած դուրս եկաւ այգուց: Այգուց մինչև
Մէյդանի գլուխը սազանդարներն անդա-
դար երգում էին. տեղ-տեղ էլ կանգնում, պա-
րեր նուագում ու կամպանիայի անդամ-
ներին պարել տալիս: Միայն Մէյդանի
գլխին՝ ուշ լինելու պատճառով, գօրօդօ-
վոյր հրամայեց վերջ դնել քէֆին ի ցաւ
բոլորեցունց, և նրանք ցրուեցան: Ամեն-

քը միայն այն էին ասում, որ այդ տե-
սակ քէֆն ոչ ճրապիգոնում, ոչ էլ Ինդոյէ-
թում մարդ տեսած չի լինի և դեռ մին-
չև այժմ այդ քէֆի լազաթը կամպանիա-
յի բերանում անջնջելի է մնացել:

Դուրս գրեց Սերգօյի դաւթաբից՝

Գէօրգի-Խան Օսէփովը:



100
The first of the month of the year
of the year of the month of the year
of the year of the month of the year
of the year of the month of the year
of the year of the month of the year

The first of the month of the year

The first of the month of the year

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊԷԿ

19391

2013

